ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ապրիլի 2020 թվականի №---Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի №414Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 14-ի №365Ն որոշմամբ հաստատված կարգը և հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մարտի 6-ի №137-20 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրի ճշգրտումներին ու 2016-2020 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 4-ի №102Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №414Ա որոշման՝

1) 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

ա. 2-րդ ենթակետում «սույն որոշման №6 հավելվածով» բառերը փոխարինել «2016-2019 թվականների ընթացքում սույն որոշման №6 հավելվածով յուրաքանչյուր ծրագրային տարվա համար» բառերով, իսկ «1-ին կետերով» բառերից հետո լրացնել «այդ ծրագրային տարվա համար» բառերը.

բ. «2) մինչև» բառերը փոխարինել «3) մինչև» բառերով.

գ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 և 2.2 ենթակետերով.

«2.1) 2020 թվականի հատվածում սույն որոշման №5 հավելվածով նախատեսված ներդրումների փաստացի իրականացված և շահագործման հանձնված ծավալները սակագնային մարժայի շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներում կներառվեն №1 հավելվածի 6-րդ կետով և №2 հավելվածով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ իրականացնելուց և շահագործման հանձնելուց հետո.

2.2) 2020 թվականի հատվածում սույն որոշման №1 հավելվածի 1-5-րդ և 7-րդ կետերով նախատեսված աշխատանքները մասնակի իրականացված լինելու պարագայում №4 հավելվածով նախատեսված ներդրումների փաստացի իրականացված և շահագործման հանձնված ծավալները սակագնային մարժայի շահույթի և մաշվածության հաշվարկման բազաներում կներառվեն №1 հավելվածի 1-5-րդ և 7-րդ կետերով նախատեսված և ամբողջությամբ իրականացված և շահագործման հանձնված աշխատանքների տոկոսային համամասնությամբ.».

2) №№1-6 հավելվածների 2020 թվականի հատվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №№1-6 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ապրիլի 2020 թ.